

Թէ մէկ զոյգ շունէն ինչուան 36 տե-  
սակ շուն առաջ կուգայ կամաց կամաց  
փոխուելով :

Իսկ անասնոց ու մարդկանց նորէն  
բոլոր երկիր ցրուելուն , ու մանաւանդ  
Մերիկայ անցնելուն համար կ'ըսենք  
Թէ նախ Լըրուպան , Լըիան ու Լըրի-  
կէն իրարու կպած են . իսկ Լըիայի ու  
Մերիկային մէջ եղած հիւսիսային նե-  
ղուցը որ է Պէհրինկան , այնչափ նեղ  
է ու մանր կզգլներով լեցուն որ մարդիկ  
պզտի լաստով մըն ալ կրնային անցնիլ , և  
երենց հետ հարկաւոր եղած անասուն-  
ներն ալ տանիլ . ասոր յայտնի նշաննե-  
րէն մէկն ալ ան է որ բուն Վամպլա-  
քայի բնակչաց ու հիւսիսային Մերի-  
կացոց դէմքերնին , բարքերնին , զգեստ-  
նին մէկմէկու շատ նման է :

Իսկ անասունները իրենք իրենցմէ ալ  
կրնային անցնիլ , որովհետեւ գիտենք Թէ  
ասոնք առանց հոգնելու երկայն միջոց  
կրնան լողալ : Երբնպէս կըսենք որ շատ  
անգամ Մերիկայի անտառներէն խը-  
լուած փայտերը , Խլանտայի ծովեզեր-  
քը կրնետուին , նոյնպէս նաև շատ ան-  
գամ մեծամեծ սառոյցներու հատոր-  
ներ , վրանին հիւսիսային ճերմակ ար-  
ջերով և ուրիշ կենդանիներով հոն կը  
զարնուին :

Նա ասոնք են ընդհանրական ջրհե-  
ղեղին երկրաբանական պատճառները  
որով կ'իմացուի Սովսէսի պատմածին  
Ճմարտութիւնը , և անհաւատ փիլիսո-  
փայից ստուծիւնը : Բայց այսչափ հա-  
ւանական պատճառներ ունենալէն ետեւ  
ալ , պէտք է խոստովանինք որ նոյն իսկ  
բնութեան ուժովը զբնութիւնը տակն  
ու վրայ ընելու համար , նմային կարո-  
ղութիւն մը հարկաւոր է . և Թէ ջրը-  
հեղեղը իրաւցընէ աստուածային ար-  
դարութեան ու ամենակարողութեան  
սքանչելիքն է :

## ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ԹՈՒՅՐԱՅԵՐՈՒՄ . Զորի մը ու էշ մը մէկտեղ  
ճամբայ կ'ընէին , էշը կը գանգրուէր իրեն բեռան  
ծանրութեանը վրայդ . Զորին չկրնալով համբ-  
րել անոր գանգառանացը գարձաւ ու ըսաւ . Ո՛վ  
ծոյլ կենդանի , ինչ է այդ տրտունջդ . Թէ որ քու  
կրած պարկերէդ մէկը ինծի տաս , իմ բեռս քու  
կրնիդ կրկինը կ'ըլլայ . իսկ Թէ որ ես իմններէս  
մէկը քեզի տամ , երկուքներուս ալ բեռը կը հա-  
ւասարի : Արդ գիտնալու է Թէ քանիկական պարկ  
էր իրենց բեռը :

Լուծումն . Որովհետեւ Թէ Զորին իր պարկերէն  
մէկը իշուն որ տար , երկուքին բեռն ալ պիտի  
հաւասարէր , ուրեմն յայտնի է որ երկուքին բե-  
ռանց տարբերութիւնը երկուք է : Ուրեմն Թէ  
որ Զորին իշուն պարկերէն մէկն առնէ , տարբե-  
րութիւնը կ'ըլլայ չորս . որով ան առնէ Զորին ի-  
շուն բեռանը կրկինը կ'ունենայ , որով Զորւոյն  
բեռը կ'ըլլայ ութը պարկ իշունը չորս : Արդ Թէ  
որ Զորին ան առնէ ինչ ետեւ իրեններէն մէկը իշուն  
տայ՝ էշը կ'ունենայ հինկ իրեն կը մնայ եօթը պարկ :  
Աս է ահա իրենց բեռանը չափը կամ պարկերուն  
թիւը , և առաջարկութեան լուծումը , որն որ  
ոտանաւոր դրուած կը գտուի յունարէն Նաղկա-  
քաղի մը մէջ :

ԳԻՒՑ . Շատ անգամ կը պատահի որ մարմա-  
րին քարէ , ալապատրէ ու յախճապակէ շի-  
նուած արձաններն կամ անօթները կամ որ և ինչ  
զարդերը անզգոյշ գիպուածով մը կը կոտորին , և  
որչափ որ կոտորուածը պզտի մաս մը ըլլայ , այն-  
չափ աւելի տգեղութիւն կը պատճառէ , ու նոյն  
տեսակ բաներուն վրայ սէր ունեցողին սիրած կը  
խշխշայ : Աս տեսակ կոտորած նիւթերը կայքնելու  
համար անցեալները մէկ նոր կերպ մը սորվեցայ ,  
որ ուզողը կրնայ փորձել : Ամանի մը մէջ կէսուի-  
կէս կաթ ու քացախ լեցու ու թող որ լաւ մը  
մակրդի ու մար կապէ , յետոյ զգուշութեամբ աս  
մարը վրայէն առ , ու մնացած շիճուկին մէջ չորս  
հինկ հաւկթի ճերմկուց զարկ ու լաւ մը յարէ .  
յետոյ շիճուկին վրայ նուրբ մաղով մը չմարած կրի  
բարակ փոշի ցանելով խառնէ , ինչուան որ խիտի  
չափ թանձրանայ : Աս զանգուածով կրնաս կոտ-  
րած մարմարը , ալապատրը , յախճապակը և այլ  
պնակի ու խեցեղէն անօթները կայքնել , որն որ  
գիւրաւ կը չորնայ , և կրակի ու ջրի ալ կը գիմա-  
նայ :